

Հաստատված է նոր խմբագրությամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

Գրանցված է նոր խմբագրությամբ
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Գլխավոր տնօրեն՝ Վահան Ստեփանյան

Նախագահ՝ Մարտին Գալստյան

«05» նոյեմբերի, 2021թ.
ք. Երևան

« » _____ 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

(նոր խմբագրությամբ)

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1. Կանոնների կարգավորման առարկան

1. Սույն կանոնները սահմանում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև՝ Կենտրոնական դեպոզիտարիա) կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) իրեն վերապահված գործառույթների շրջանակներում Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով և Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման և պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների պահառության շրջանակներում մատուցվող ծառայությունների սակագները:

Գլուխ 2. Կանոնների կիրառման ոլորտը

2. Սույն կանոնների պահանջները կիրառվում են այն թողարկողների, հաշվետերերի, Համակարգի անդամների և այլ անձանց նկատմամբ, ովքեր Օրենքով և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով օգտվում են սույն կանոններով սահմանված ծառայություններից: Սույն կանոնները չեն տարածվում գանձապետական պահառուի գործառույթների իրականացման նպատակով ՀՀ Ֆինանսների նախարարության միջնորդությամբ գրանցված գործառնությունների վրա:

Գլուխ 3. Կանոններում օգտագործվող հիմնական հասացությունները

3. Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝
 - 3.1 «ՀՀ դրամ». Հայաստանի Հանրապետության դրամ.
 - 3.2 «Սակագին». սույն կանոններով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարի չափ՝ արտահայտված համապատասխան ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով կամ ՀՀ դրամով.
 - 3.3 «Ծառայության գին». Համակարգի անդամի կողմից թողարկողներին և հաշվետերերին մատուցվող միջնորդավորված ծառայությունների համար վճարման ենթակա գումար.
4. Սույն կանոններում կիրառվող այլ հասկացությունները ունեն Օրենքով և Կենտրոնական դեպոզիտարիայի այլ կանոններով սահմանված նշանակությունը:

Գլուխ 4. Ծառայությունների դիմաց վճարվող դրամական միավորը

5. Սույն կանոններով սահմանված՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից վճարումների դեպքերի, որոնք կարող են իրականացվել նաև ազատ փոխարկելի արտարժույթով (ԱՄՆ դոլար, Եվրո), ինչպես նաև ռուսական ռուբլիով: Արտարժույթով

վճարման դեպքում ՀՀ դրամով արտահայտված գումարները վերահաշվարկվում են համապատասխան արտարժույթի՝ հաշիվը դուրս գրելու օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով:

6. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվում է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և/կամ ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան սակագինը:

Գլուխ 5. Ծառայությունների դիմաց վճարման կարգը

7. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է անկանխիկ ձևով (փոխանցումով), մինչև Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայություններից օգտվելու համար Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված փաստաթղթերը հաշվի օպերատորին կամ վերջինիս միջնորդությամբ կամ առանց միջնորդության Կենտրոնական դեպոզիտարիա ներկայացնելը (հանձնարարականը/հարցումը էլեկտրոնային եղանակով փոխանցելը), բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական դեպոզիտարիան ծառայությունը մատուցում է Համակարգի անդամին կամ ներկայացվել են Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ընդունելի վճարման երաշխիքներ:
8. Եթե Թողարկողը Հաշվի օպերատորի միջնորդությամբ կնքել է կամ վերակնքել է ռեեստրի վարման պայմանագիրը, սույն կանոններով սահմանված ծառայության գինը թողարկողը պարտավոր է վճարել Հաշվի օպերատորին:
9. Ծառայության գինն ամբողջությամբ գանձվում է Համակարգի անդամի կողմից և/կամ հաճախորդից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված դեպքերում: Համակարգի անդամը, անկախ իր կողմից ծառայության գինը գանձելու հանգամանքից, պարտավոր է սույն կանոններով նախատեսված սակագինը սույն կանոններով սահմանված ժամկետներում վճարել Կենտրոնական դեպոզիտարիային: Համակարգի անդամը իրավունք ունի նաև բոլոր կամ մի քանի սակագներին չհավելել իր կողմից մատուցվող ծառայությունների հավելավճարը կամ ծառայության գինը սահմանել սակագնից ավելի ցածր: Նման դեպքերում ևս, Համակարգի անդամը պարտավոր է սույն կանոններով սահմանված ժամկետներում մատուցված ծառայությունների սակագինը վճարել Կենտրոնական դեպոզիտարիային: Վերը նշված բոլոր դեպքերում ծառայության գինը հաճախորդի կողմից ամբողջությամբ վճարվում է Համակարգի անդամին: Այն դեպքում, երբ Համակարգի անդամի կողմից ներկայացված սակագինը առնվազն 20%-ով գերազանցում է Համակարգի անդամների կողմից նշված ծառայության համար սահմանված միջին գնին, ապա Համակարգի անդամը, Կենտրոնական դեպոզիտարիայի պանաջով, պարտավոր է ներկայացնել գնագոյացման հիմնավորում: Համակարգի անդամը պարտավոր է ծառայությունների գները հրապարակել իր ինտերնետային կայքում, ինչպես նաև սպասարկման վայրերում դրանք հասանելի դարձնել հաճախորդներին: Ծառայությունների դիմաց ստացված հավելավճարները համարվում են Համակարգի անդամի սեփականությունը և Կենտրոնական դեպոզիտարիային վճարման ենթակա չեն: Կենտրոնական

դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության» կանոններով նախատեսված այն դեպքերում, երբ նախատեսված է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ծառայությունների մատուցում անմիջականորեն հաճախորդներին՝ առանց Հաշվի օպերատորի միջնորդության, սույն կանոններով սահմանված սակագների չափերը, դրանց հաշվարկման, վճարման կարգը և մյուս պայմանները տարածվում են նաև այդ հաճախորդների վրա:

10. Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված այն դեպքերում, երբ նախատեսված է Համակարգի անդամի կողմից հաճախորդներին որոշակի ծառայությունների անվճար մատուցում, սակայն սույն կանոններով այդ ծառայությունների համար սահմանված է սակագին, Համակարգի անդամը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիային վճարել այդ սակագինը:

11. Համակարգի անդամի կողմից իր սակագների զեղչման դեպքում Համակարգի անդամը պարտավոր է սահմանել չափանիշ(ներ), որին/որոնց համապատասխանող ցանկացած հաճախորդի համար այդ զեղչը կկիրառվի հավասարաչափ:

12. Համակարգի անդամը մինչև համապատասխան միջնորդավորված ծառայության մատուցումը, ինչպես նաև սակագների ամեն մի փոփոխության դեպքում պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիա ներկայացնել իր կողմից մատուցվող ծառայությունների սակագները սահմանող ներքին իրավական ակտեր: Հաշվի օպերատորի սակագներն ուժի մեջ են մտնում Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, եթե առանձին դեպքերում սակագները սահմանող ակտով դրա կամ դրա առանձին հոդվածների ուժի մեջ մտնելու այլ, ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման դեպքում արժեթղթերի հաշվառման (ռեեստրի վարման) սակագինն ամբողջ ամսվա համար գանձվում է այն Հաշվի օպերատորից, որի հետ ամսվա վերջին օրվա դրությամբ թողարկողն ունի ռեեստրի վարման գործող պայմանագիր:

Հաշվետիրոջ (այդ թվում՝ անվանատիրոջ) հաշիվներում առկա արժեթղթերի պահպանման սակագինը չի հաշվարկվում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի նկատմամբ: Անվանատիրոջ մոտ նշված անձանց պատկանող արժեթղթերի առկայության դեպքում վերջինս դրանց մնացորդների մասին ՍԻ-ԲԻ-ԷՅ-ՆԵԹ ցանցով տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ավարտը: Հաշվի օպերատորի կողմից սույն կետում նշված սուբյեկտներին պատկանող արժեթղթերի պահպանման սակագինը հավելման ենթակա չէ:

13. Կենտրոնական դեպոզիտարիան մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը ներառյալ հաշիվ է ներկայացնում Համակարգի անդամներին՝ նրանց միջնորդությամբ սպասարկվող անձանց, այդ թվում թողարկողներին և հաշվետերերին՝ մատուցված ծառայությունների ծավալին, ինչպես նաև 27.2 և 27.3 կետերով սահմանված վճարման ենթակա գումարներին ($Գ_2$ և $Գ_3$) համապատասխան: Համակարգի անդամը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից հաշիվը ներկայացնելու պահից տասը աշխատանքային օրվա ընթացքում վճարել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ներկայացված հաշվում ներառված գումարի ամբողջ ծավալով: Համակարգի անդամները մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային օրը ներառյալ պետք է ներկայացնեն Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իր ծրագրային համակարգում կամ

առանձին նամակով ուղարկված վճարների հաշվարկման առարկությունները, եթե այդպիսիք լինեն: Նշված ժամկետում առարկություններ չներկայացնելու դեպքում վճարների հաշվարկը համարվում է ընդունված Համակարգի անդամի կողմից:

14. Հաշվի օպերատորի կամ կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակի շնորհման համար սահմանված վճարները Համակարգի անդամի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային վճարվում են ոչ ուշ, քան համապատասխան կարգավիճակի շնորհմանը հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում, իսկ սպասարկման ամսական անդամավճարների վճարումը իրականացվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-րդ աշխատանքային օրը: Եթե Համակարգի անդամը ցանկություն է հայտնել ստանալ միաժամանակ և հաշվի օպերատորի, և կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակ, ապա վերջինս պարտավոր է վճարել սույն կանոններով սահմանված յուրաքանչյուր կարգավիճակի շնորհման և սպասարկման համար սահմանված սակագներն առանձին:
15. Համակարգի անդամի կողմից սույն կանոնների 13. և 14. կետերով սահմանված ժամկետներում նախատեսված վճարների չկատարման կամ ուշացման դեպքում Կենտրոնական Դեպոզիտարիան Համակարգի անդամի նկատմամբ հաշվարկում է տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի (առանց տույժերի) 0,15%-ի չափով:
16. Հաշվի օպերատորի միջնորդությամբ Կենտրոնական դեպոզիտարիայի հետ ռեեստրի վարման պայմանագիրը չվերակնքած թողարկողներին Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվում են միայն սույն կանոնների 33.2 և 33.3 կետերով սահմանված ծառայությունները, իսկ համապատասխան սակագների չափով վճարումները տվյալ թողարկողի կողմից իրականացվում են անմիջականորեն Կենտրոնական դեպոզիտարիային՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխատանքային օրը ներառյալ:
17. Թողարկողի կողմից սույն կանոնների 33.2 և 33.3 կետերով սահմանված ծառայությունների մատուցման համար նախատեսված վճարները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում Կենտրոնական Դեպոզիտարիան տվյալ թողարկողի նկատմամբ հաշվարկում է տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի (առանց տույժերի) 0,15%-ի չափով:
18. Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից սույն կանոնների 62.1, 62.2 և 67. կետերով սահմանված ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է կիսամյակային պարբերականությամբ՝ վճարման ենթակա գումարի մի կեսը վճարվում է մինչև տվյալ տարվա հուլիսի 30-ը ներառյալ, իսկ մյուս կեսը՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը ներառյալ:
19. Սույն կանոններով նախատեսված սակագները չեն ներառում ավելացված արժեքի հարկը և ենթակա են ավելացված արժեքի հարկով հարկման ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Այն դեպքում, երբ սույն կանոններին համապատասխան հաշվարկված գումարները՝ ավելացված արժեքի հարկը ներառյալ, կազմված են ամբողջ թվերից և նաև որոշակի լումաներից, ապա լումաները կլորացվում են դեպի ներքև 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:
20. Սույն կանոնների 43.5 և 43.6 կետերով սահմանված սակագների գումարները գանձվում են ինչպես արժեթղթեր փոխանցողից, այնպես էլ արժեթղթերը ստացողից, իսկ սակագնի հաշվարկման հիմք է հանդիսանում Համակարգում մուտքագրված հանձնարարականում

նշված գործարքի առարկա արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը: Ընդ որում՝ 43.5 և 43.6 կետերով սահմանված ծառայությունների համար Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված դեպքերում արժեթղթերի փոխանցման նպատակով նոր՝ ճշգրտված հանձնարարականների ներկայացման դեպքում լրացուցիչ գումար չի գանձվում:

- 20.1. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի սույն կանոնների 47. և 48 կետերում ընդգրկված առանձնահատուկ արժեթղթերի (անվանական արժեքով հաշվառվող) համար Հաշվետիրոջ դիմումի հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ կիրառել արժեթղթերի պահպանման ավելի ցածր սակագին (սակայն ոչ պակաս, քան Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրված սակագին՝ գումարած 25% հավելագին) այն դեպքում, եթե տվյալ արժեթղթերի շուկայական արժեքը երեք ամիս անընդմեջ էականորեն ցածր է եղել դրա անվանական արժեքից, և եթե օտարերկրյա պահառուի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրվել է արժեթղթերի պահպանման հրապարակված սակագնից էականորեն ցածր սակագին:
- 20.2 Եթե 20.1 կետով նախատեսված զեղչի կիրառումից հետո արժեթղթի շուկայական գինը երեք ամիս անընդմեջ չի նվազում դրա անվանական արժեքից, ապա Կենտրոնական դեպոզիտարիան իրավունքի ունի ուժը կորցրած ճանաչել նախորդ կետի համաձայն տրամադրված զեղչված սակագինը:
- 20.3 Եթե որևէ արժեթղթի համար սույն կանոնների 20.1 կետի համաձայն սահմանվել է զեղչված սակագին, ապա այդ սակագինը հրապարակվում է Կենտրոնական դեպոզիտարիայի ինտերնետային կայքում, իսկ դրանից օգտվելու հնարավորությունը հավասարաչափ ընձեռվում է ցանկացած անձի:
- 20.4. Եթե հաճախորդի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի անունով այլ պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվի օգտագործման ժամանակ տվյալ պառահուի կողմից ներկայացվել է վճարման ենթակա հաշիվ, որը նախատեսված չէ սույն կանոններով, ապա հաճախորդը պարտավոր է փոխհատուցել Կենտրոնական դեպոզիտարիայի փաստացի կրած ծախսերի չափով:

Գլուխ 6. Ծառայությունների մատուցման կասեցման դեպքերում վճարման առանձնահատկությունները

21. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի կասեցնել սույն կանոնների 33.2 և 33.3 կետերով սահմանված ծառայությունների մատուցումը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ ռեեստրի վարման պայմանագիրը հաշվի օպերատորի միջնորդությամբ չվերակնքած այն Թողարկողներին, որոնք Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման մեկ տարուց ավելի ժամկետանց պարտավորություն:
22. Հաշվի օպերատորն իրավունք ունի կասեցնել սույն կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումը իր միջնորդությամբ ռեեստրի վարման պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող թողարկողներին, եթե վերջիններս Հաշվի օպերատորի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավելի ժամկետանց պարտավորություն (եթե հաշվի օպերատորի կանոններով ավելի երկար ժամկետ սահմանված չէ) կամ եթե թողարկողը դատարանի ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ:
23. Հաշվի օպերատորն իրավունք ունի կասեցնել սույն կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումը իր միջնորդությամբ արժեթղթերի պահառության պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող հաշվետերերին, եթե վերջիններս հաշվի

օպերատորի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավելի ժամկետանց պարտավորություն և, եթե հաշվի օպերատորի կանոններով այլ, ավելի երկար ժամկետ սահմանված չէ կամ եթե հաշվետերը դատարանի ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ:

24. Հաշվի օպերատորի կողմից սույն կանոնների 22. և 23. կետերով նախատեսված կասեցումների դեպքում, վերջինս պարտավոր է նույն աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտնել Կենտրոնական դեպոզիտարիային, ինչի արդյունքում դադարում է հաշվի օպերատորի կողմից սույն կանոններին համաձայն Կենտրոնական դեպոզիտարիային կատարվող վճարների հաշվարկը՝ կասեցված ծառայությունների ծավալին համապատասխան:
25. Սույն կանոնների 21., 22. և 23. կետերով նախատեսված կասեցումների դեպքում կասեցման պահից դադարեցվում է նաև Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից թողարկողների և հաշվետերերի նկատմամբ ծառայությունների դիմաց գանձվող վճարների և տույժերի հաշվարկը:
26. Ծառայությունների մատուցման՝ սույն կանոնների 21., 22. և 23. կետերով նախատեսված կասեցումների դեպքում Համակարգից տեղեկություններ ստանալու և Թողարկողի արժեթղթերի հաշվետերերի ռեեստրում և/կամ Հաշվետերերի հաշիվներում գործողություններ կատարելու վերաբերյալ Կենտրոնական դեպոզիտարիային և/կամ հաշվի օպերատորին հանձնարարականներ տալու իրավասություն ունեն ՀՀ կենտրոնական բանկը, Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատարանները, նոտարները, հետաքննության և նախաքննության մարմինները՝ ՀՀ Քաղաքացիական և Քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ու դեպքերում: Ծառայությունների կասեցման ամբողջ ժամանակահատվածում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից անմիջականորեն կամ հաշվի օպերատորի միջնորդությամբ ծառայությունը կասեցված թողարկողներին և հաշվետերերին չեն մատուցվում Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված ծառայությունները:
27. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ հաշվի օպերատորը իրավունք ունեն վերսկսել թողարկողին և հաշվետիրոջը ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ վերակնքել ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս այն չվերակնքած թողարկողների հետ հետևյալ դեպքերում.

27.1 Եթե ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս վերակնքված չէ, ապա Գ₁=ԺՊ+ՊՎՎ բանաձևով հաշվարկված վճարման ենթակա գումարը (Գ₁) Կենտրոնական դեպոզիտարիային անմիջականորեն (կամ հաշվի օպերատորի միջնորդությամբ) վճարելուց կամ հաճախորդի կողմից ընդունելի երաշխիքների ներկայացումից հետո: Նշված բանաձևում ԺՊ-ն կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարն է՝ գումարած հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար, իսկ ՊՎՎ-ն պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $\langle \Gamma \times O / 365 >$, որտեղ O-ն՝ կասեցման օրերի քանակն է, իսկ $\langle \Gamma >$-ն հիմնական դրույքաչափն է, որը կազմում է.
ա. 80,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 1-ից մինչև 99,
բ. 160,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 100-ից մինչև 499,

գ. 300,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 500 և ավելի:

Ընդ որում՝ ռեեստրի վարման պայմանագիրը Հաշվի օպերատորի միջնորդությամբ դեռևս չվերականգնած թողարկողների նկատմամբ հաշվարկվող ՊՎՎ-ի առավելագույն գումարը չի կարող գերազանցել սույն ենթակետի ա. մասում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 150,000 ՀՀ դրամը, բ. մասում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 300,000 ՀՀ դրամը, գ. մասում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 550,000 ՀՀ դրամը:

27.2 Եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերականգնված է, ապա $Գ_2 = Ժ\text{Պ} + \text{ՊՎՎ}$ բանաձևով ($Գ_2$) հաշվարկված վճարման ենթակա գումարը Հաշվի օպերատորին վճարելուց հետո: Նշված բանաձևում $Ժ\text{Պ}$ -ն՝ կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարն է՝ գումարած հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար, ՊՎՎ-ն պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $< \text{Դ} \times \text{O} / 365$, որտեղ O -ն՝ կասեցման օրերի քանակն է, $< \text{Դ}$ -ն հիմնական դրույքաչափն է, որը հաշվարկվում է 27.1 կետի ա., բ., գ. մասերում նշված հիմնական դրույքաչափերին ավելացնելով համապատասխանաբար 20,000 ՀՀ դրամ, 40,000 ՀՀ դրամ և 50,000 ՀՀ դրամ (եթե Հաշվի օպերատորի կանոններով այլ, ավելի ցածր $< \text{Դ}$ սահմանված չէ):

27.3 Եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերականգնված է, ապա $Գ_3 = Ժ\text{Պ} + \text{ՊՎՎ}$ բանաձևով ($Գ_3$) հաշվարկված վճարման ենթակա գումարը հաշվի օպերատորին վճարելուց հետո, որտեղ ՊՎՎ-ն պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $< \text{Դ} \times \text{O} / 365$, ընդ որում՝ $< \text{Դ}$ -ն հիմնական դրույքաչափն է, որը կազմում է վերսկսման պահին հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.009%-ը (եթե Հաշվի օպերատորի կողմից այլ, ավելի ցածր $< \text{Դ}$ սահմանված չէ), O -ն կասեցման օրերի քանակն է, $Ժ\text{Պ}$ -ն՝ կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարն է՝ գումարած հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար:

27.4 Ընդ որում՝ 27.1, 27.2, 27.3 ենթակետերով վճարման ենթակա գումարի մասնակի վճարման դեպքում առաջին հերթին մարման են ենթակա ժամկետանց պարտավորությունների գումարը ($Ժ\text{Պ}$), այնուհետ՝ պայմանագրի վերսկսման վճարը (ՊՎՎ):

28. Հաշվի օպերատորը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ներկայացված հաշվի հիման վրա վերջինիս վճարել սույն կանոնների 27.1 կետի համաձայն հաշվարկված գումարը ($Գ_1$)՝ սույն կանոնների 22. ենթակետի հիման վրա կասեցված ծառայությունների մատուցման վերսկսման դեպքում՝ և $Գ_4 = Ժ\text{Պ} + \text{ՊՎՎ}$ բանաձևի համաձայն հաշվարկված գումարը ($Գ_4$), որտեղ ՊՎՎ-ն՝ պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $< \text{Դ} \times \text{O} / 365$, $< \text{Դ}$ -ն հիմնական դրույքաչափ, որը կազմում է վերսկսման պահին հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.006%-ը, O -ն՝ կասեցման օրերի քանակն է, իսկ $Ժ\text{Պ}$ -ն կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարն է՝ գումարած հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար՝ 23. ենթակետի հիման վրա կասեցված ծառայությունների մատուցման վերսկսման դեպքում:

29. Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայություններից օգտվող անձինք Կենտրոնական դեպոզիտարիայի հանդեպ ունեցած իրենց պարտավորությունների մասին կարող են տեղեկանալ Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքից:

30. Ծառայությունների մատուցման՝ սույն կանոնների 21., 22. և 23. կետով նախատեսված կարգով կասեցման ժամանակահատվածում թողարկողի կամ հաշվետիրոջ կողմից օրենքով սահմանված դեպքերում պայմանագիրը լուծելու դեպքում.

30.1 թողարկողը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը Կենտրոնական դեպոզիտարիային վճարել 27.1 կետի համաձայն հաշվարկված գումարը և մարել Կենտրոնական դեպոզիտարիայի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս վերակնքված չէ.

30.2 թողարկողը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը հաշվի օպերատորին վճարել 27.2 կետի համաձայն հաշվարկված գումարը և մարել հաշվի օպերատորի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է.

30.3 հաշվետերը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը հաշվի օպերատորին վճարել 27.3 կետի համաձայն հաշվարկված գումարը և մարել հաշվի օպերատորի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է:

31. Հաշվի օպերատորը պարտավոր է սույն կանոնների 30.2 և 30.3 ենթակետով նախատեսված դեպքում ռեեստրի վարման կամ արժեթղթերի պահառության պայմանագրի լուծման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիային վճարել համապատասխանաբար 27.1 և 28 կետի (Գ₄) բանաձև համաձայն հաշվարկված գումարը:

32. Հաշվի օպերատորն իրավունք ունի թողարկողի և/կամ հաշվետիրոջ կողմից սույն սույն սակագներով սահմանված վճարումները ուշացնելու դեպքում վճարման ենթակա գումարներն անակցեպատ կարգով գանձել թողարկողի և/կամ հաշվետիրոջ՝ Հաշվի օպերատորի մոտ գտնվող այլ դրամային, արտարժույթային կամ արժեթղթերի հաշիվներից:

ԲԱԺԻՆ 2. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻԶ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ 7. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից թողարկողին մատուցվող արժեթղթերի հաշվառման ծառայություններ

33. Արժեթղթերի ընդհանուր հաշվառման (ռեեստրավարման) ծառայություններ

33.1 Թողարկողի արժեթղթերի ռեեստրի սկզբնական տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Թողարկողի վերաբերյալ տվյալների գրանցում ծրագրային Համակարգում		Անվճար
Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում		Անվճար

33.2 Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, ներդրումային ֆոնդերի փայերի՝ հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում). (Տվյալ դասի

¹ Բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի

տեղաբաշխված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում առկա հաշիվների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը (ամսական)
Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, փայերի հաշվառում (սեփականատերերի(անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	4 000 ՀՀ դրամ / 1-ից մինչև 49-ը տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
		6 000 ՀՀ դրամ / 50-ից մինչև 99-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
		8 500 ՀՀ դրամ / 100-ից մինչև 199-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
		13 000 ՀՀ դրամ / 200-ից մինչև 499-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
		16 000 ՀՀ դրամ / 500-ից մինչև 999-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայերի) քանակ
		31 000 ՀՀ դրամ / 1000 և ավելի տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ

33.3 Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում). (Արտարժույթով արտահայտված անվանական արժեք ունեցող պարտատոմսերի հաշվառման (արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման և պահպանման) սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ ամսվա վերջին օրվա համար ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի հաշվարկով)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը (ամսական)
Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Տեղաբաշխված պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) յուրաքանչյուր դասի համար ընդհանուր անվանական արժեք	մինչև 1 550 000 000 ՀՀ դրամը / 0,002%
		1 550 000 000 ՀՀ դրամից ավել / 31 000 ՀՀ դրամ

33.4 Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում(սակագինը վճարում է այն հաշվի օպերատորը, որի միջնորդությամբ վերակնքվել է պայմանագիրը)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը (մեկ փոխանցում)
-----------------------	---------	--------------------------

Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար	5 000 ՀՀ դրամ (Այս ծառայության համար օպերատորի կողմից սահմանված հավելագինը չի կարող գերազանցել 1000 ՀՀ դրամը)
--	-------------------------------------	---

34. Տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայություններ (բացառությամբ կարգավորվող շուկայի միջոցով տեղաբաշխված, ինչպես նաև վերակազմակերպման հիմքով արժեթղթերի փոխարկումն ապահովելու համար լրացուցիչ տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառման դեպքերի, ընդ որում՝ արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման արդյունքում տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայությունների սակագինը տեղաբաշխման գործընթացի վերջում վերահաշվարկվում է ընդհանուր անվանական ծավալի սկզբունքով)

34.1 Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում (բաժնետոմսերի տեղաբաշխում բացառությամբ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,05%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 1 500 000 ՀՀ դրամ

34.2 Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում (պարտատոմսերի տեղաբաշխում,բացառությամբ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխված պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական արժեք	մինչև 30 000 000 000 ՀՀ դրամը / 0,005%
		30 000 000 000 ՀՀ դրամից ավել / 1 500 000 ՀՀ դրամ

34.3 Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	տեղաբաշխվող բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	մինչև 1 000 000 000 ՀՀ դրամը / 0,05%
		1 000 000 000 ՀՀ դրամից ավել / 500 000 ՀՀ դրամ

34.4 Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	տեղաբաշխվող պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական արժեք	մինչև 4 000 000 000 ՀՀ դրամը / 0,005%
		4 000 000 000 ՀՀ դրամից ավել / 200 000 ՀՀ դրամ

35. Թողարկողի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում

35.1 Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում (ներառում է արժեթղթերի փոխարկումը (այդ թվում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման, արժեթղթերի համախմբման (կոնսոլիդացիա) և բաժանման հիմքով), թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերը մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերի փոխարկումը, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման այն դեպքի, երբ արժեթղթերի քանակի և անվանական արժեքի փոփոխություն տեղի չի ունենում) արդյունքում արժեթղթերի փոխարկումը, թողարկողի՝ իր կողմից թողարկված արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) ձեռքբերումը, հետգնումը և մարումը կամ չեղյալ համարումը: Ընդ որում՝ փոխարկման դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկման արդյունքում գրանցվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը, բացառությամբ բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման հիմքով բաժնետոմսերի փոխարկման դեպքերի: Բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման պայմանավորված կորպորատիվ գործողության դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը):

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում (բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի)	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,05%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 1 500 000 ՀՀ դրամ
Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում	Կորպորատիվ գործողության առարկա՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական ծավալ	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,005%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 150 000 ՀՀ դրամ
Թողարկողի արժեթղթերի հաշվի բացում (փակում)	Հաշիվ	Անվճար

36. Թողարկողի հարցման հիման վրա իր կամ իր կողմից թողարկված (տեղաբաշխված) արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հետ կապված ծառայություններ

36.1 Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում	Ցուցակ	Անվճար

36.2 Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի (առանց հիմքերի) տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	Անվճար
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		Անվճար

36.3 Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով), ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվում են գործառնությունների հիմքերը կամ տեղեկանք գործառնությունների բացակայության վերաբերյալ

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
-----------------------	---------	----------

Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	7 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		10 000 ՀՀ դրամ

36.4 Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով), ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվում են գործառնությունների հիմքերը կամ տեղեկանք գործառնությունների բացակայության վերաբերյալ

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		15 000 ՀՀ դրամ

37. Թողարկողի մասին տվյալների փոփոխությունների գրանցում Համակարգում (ներառում է թողարկողի գտնվելու կամ գործունեության վայրի, բաժնետիրական ընկերությունների տեսակի, տնօրենի փոփոխության, ընկերության անվանման փոփոխության կամ արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխությունը (արժեթղթերի փաստաթղթային ձևի փոփոխությունը ոչ փաստաթղթայինի և հակառակը))

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տվյալների փոփոխության մուտքագրում Համակարգ	-	Անվճար

Գլուխ 8. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից թողարկողին մատուցվող լրացուցիչ ծառայություններ

38. Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը (յուրաքանչյուր գործընթացի համար)
Շահութաբաժինների հաշվարկում և վճարում	Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար	0,1 %

39. Թողարկողի հանձնարարագրի հիման վրա պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը (յուրաքանչյուր գործընթացի համար)
Պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում	Վճարված/բաշխված դրամական միջոցների գումարը	0,01 %

